ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

ի պատասխան Ձեր 07.06.2024թ. հ.148-2024թ. գրության՝ Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի հ.7 բազմաբնակարան շենքի մի խումբ բնակիչների կողմից ներկայացված հարցի վերաբերյալ, տեղեկացվում է.

Բարձրացված հարցն առնչվում է Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի թիվ 7 շենքի տանիքում վերանորոգման աշխատանքներ իրականացնելու հետևանքով նույն շենքի 5-րդ և 6-րդ հարկերի բնակարանները և բնակարանների գույքը վնասվելու արդյունքում սեփականատերերին պատճառված վնասի փոխհատուցմանը: Վնասի փոխհատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, իսկ վնասը քաղաքաշինական գործունեության հետևանքով առաջանալու դեպքերում՝ նաև «Քաղաքաշինության մասին» օրենքի դրույթներով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը: Նշված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ վնասի փոխհատուցման պահանջի իրավունքը պատկանում է վնասված գույքի սեփականատիրոջը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Քննարկվող պարագայում Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի թիվ 7 շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներն իրականացվել են Կենտրոն վարչական շրջանի ծրագրերով հայտարարված մրցույթում հաղթող կազմակերպության հետ կնքված պայմանագրի շրջանակներում:

«Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են մինչև շինարարություն սկսելը,

ինչպես նաև շինարարության ընթացքում համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ:

Բարձրացված հարցը քննարկվել է նաև Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում, ինչի կապակցությամբ վարչական շրջանի ղեկավարի 2024 թվականի հունիսի 12-ի թիվ 34054-24 գրությամբ տեղեկացվել է, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի հետ 2024 թվականի հունիսի 6-ին կայացած բնակիչների ընդունելության ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել ք.Երևան, Մ. Մաշտոցի պողոտա թիվ 7 շենքի բնակիչների և «Ավետիս Խեցի» ՍՊ ընկերության տնօրինության հետ, համաձայն որի՝ նշված հասցեի բնակիչների կողմից վնասի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ներկայացնելուց հետո հարցը կկարգավորվի:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից 20.06.2024թ. ներկայացված տեղեկատվության՝ վերոնշյալ հասցեի տանիքի վերանորոգման աշխատանքներն ավարտվել են:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ